Պ-1080[1]-20.05.2025-ՊԱ-011/0

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. ~~2005 թվականի հուլիսի 8-ի «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 4.1-ին մասի 2-րդ կետում առաջարկվում է կատարել լրացում՝ ավելացնել «գ» պարբերությունը՝ հետևյալ խմբագրությամբ.~~ *«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-166-Ն օրենքի 24-րդ հոդվածի 4.1-ին մասի 2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4.4-րդ մասով.*

«~~**Հոդված 24 Տրանսպորտային միջոցների և վարորդների հիմնական իրավունքներն ու պարտականությունները**~~

~~գ.~~ *«4.4. «Ճանապարհատրանսպորտային պատահարին առնչություն ունեցող վարորդները* պարտավոր են սույն հոդվածի 4.1-ին մասի 2-րդ կետի «ա» և «բ» ~~պարբերություններով նախատեսված~~ *ենթակետերով ընձեռնված հնարավորությունից օգտվելու* դեպքերում, միայն երկու ավտոտրանսպորտային միջոցների մասնակցությամբ պատահարի պահից քսան րոպեների ընթացքում թողնել պատահարի վայրը և ավտոտրանսպորտային միջոցը տեղափոխել օրենքով չարգելված այլ վայր։, *եթե ավտոտրանսպորտային միջոցը պատահարի հետևանքով չունի այնպիսի տեխնիկական անսարքություն, որի առկայության դեպքում արգելվում է դրա շահագործումը։»։*

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում ~~պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը~~ *2025 թվականի սեպտեմբերի 1-ից*: